

ՀՀ ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ Հարցեր, խնդիրներ, առաջարկություններ

Տեղի ունեցավ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը: Նախօրյակին, մարտի 16-ին, ՀՀ ԳԱԱ ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական, բնական և հումանիտար գիտությունների բաժանմունքներում լավեցին և քննարկվեցին բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարների, պրոֆեսորների գիտական խորհուրդների նախագահների տարեկան հաշվետվությունները, հանրագումարի քննարկումները և բաժանմունքների և նրանց ստորաբաժանումների գործունեության հիմնական արդյունքները:

Մարտի 17-ին ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը շարունակեց իր աշխատանքը:

Ժողովին ներկա էին Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչար-

յանը, ՀՀ վարչապետ Արմեն Դարբինյանը, հայ Առաքելական եկեղեցու Արարատյան թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը, հանրապետության գիտության և կրթության նախարար Լևոն Մկրտչյանը, հասարակական-քաղաքական կազմակերպությունների, հանրապետության գիտական հաստատությունների, ակադեմիայի տարբեր ըստորաբաժանումների ներկայացուցիչներ:

ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանի քաջաման խոսքից (հրապարակվում է այսօրվա համարում) հետո, զեկուցումներով հանդես եկան փոխպրեզիդենտներ, ակադեմիայի բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարներ Յուրի Ծուբուրյանը, Էմիլ Գաբրիելյանը, Գևորգ Բրուտյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտու-

ղար Վլադիմիր Բարխուդարյանը:

Այնուհետև ծավալված մըտքերի փոխանակությանը մասնակցեցին Ռադիկ Մարտիրոսյանը, Լենդրուշ Խուրշուդյանը, Գևորգ Ղարիբջանյանը, Արմեն Սաղաթելյանը, Միքայել Քոթանյանը, Ծափկո Բադալյանը, Ալպիկ Մկրտչյանը, Լենսեր Աղազովյանը, Կոնստանդին Ղարազյոզյանը:

Եվ որովհետև տարեկան արդյունքների հաշվետվությունների հանգամանալի և շահագրգիռ քննարկումը տեղի էր ունեցել բաժանմունքների ժողովներում, ելույթ ունեցողները անդրադարձան համաակադեմիական խնդիրներին, գիտության զարգացման, հանրապետության սոցիալ-տնտեսական, սոցիալական, քաղաքական հարցերին:

Մասնավորապես կարևորվեցին գիտության մասին օ-

րենքի ընդունման անհրաժեշտությունը, գիտության երիտասարդացման խնդիրները: Հանրապետության գիտական ներուժի պահպանման կարևորագույն պայմաններից մեկը՝ երիտասարդ գիտնականների ներհուսքն է գիտություն: Սակայն վերջին տարիներին զգալիորեն խաթարվել է համալրման այդ գործընթացը: Ինստիտուտները միջոցներ չունեն աշխատանքի ընդունելու երիտասարդ գիտնականներին: Իսկ եթե ունեն էլ, աշխատավարձի խղճուկ չափերը երիտասարդներին ըստիպում են աշխատանք փրկություններում: Ցածր աշխատավարձով է պայմանավորված նաև գիտնականների արտահոսքը՝ ինչպես արտասահմանյան երկրներ, այնպես էլ եկամտաբեր այլ բնագավառներ: Սա նույնպես լրջորեն սպառնում

է գիտական ներուժի պահպանման և զարգացման գործին:

Գիտությունների ազգային ակադեմիան Հայաստանի կառավարության պաշտոնական խորհրդատուն է: Սակայն ինչպես նշվեց ելույթներում, հանրապետության համար քաջամարտիկ կենսական և կարևորագույն խնդիրների գիտականորեն հիմնավորված առաջարկություններ չեն արժանանում պատշաճ ուշադրության: Ակադեմիայի գիտական հաստատությունները մի շարք կոնկրետ առաջարկություններ են ներկայացրել՝ հանրապետության հանրային ուսուցանողների օգտագործման, արտադրության որոշ նյութերի զարգացման օպտիմալ տարբերակների վերաբերյալ, որոնք մինչև օրս չեն իրականացվել: Խոսվեց նաև գիտական հայտնագործությունների ար-

տոնագրման գործի թերությունների մասին: Փոխանակ հայտնագործությունների հեղինակները խրախուսվեն և աջակցություն տանան, նրանք ստիպված են վճարել արտոնագրերի ստացման համար: Եվ քանի որ նրանք չունեն համապատասխան գումարը, չեն կարողանում արտոնագրել իրենց հայտնագործությունները: Մինչդեռ, պետությունը ինքը պետք է շահագրգռված լինի այդ հայտնագործություններին տեղ կանգնելու, արտոնագրելու գործում: Չէ՛ որ դրանք ազգային հարստություն են:

(Շահունակությունը՝ 6-րդ էջում)

(ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովի զեկուցումները կարդացե՛ք՝ 3—6-րդ էջերում)

ՀՀ ԳԱՍ ՊՐԵՋԻԴԵՆՏ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ֆ. Տ. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԸ

Մեծարգո գործընկերներ, մեծարգո հյուրեր: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հաշվետու տարվա գործունեության արդյունքները վկայում են, որ ակադեմիայի համակարգը, հաղթահարելով սոցիալ-ամենաանվան իրավիճակից բխող դժվարությունները, հասել է դրական որոշ տեղաշարժերի՝ ինչպես հիմնարար, այնպես էլ կիրառական գիտական հետազոտությունների ապարեզում:

Ստաջին հերթին անհրաժեշտ է ճշել ակադեմիայի գիտնականների ջանքերը՝ օգտագործելու բոլոր հնարավորությունները, որպեսզի պահպանվեն մեր գիտական կոլեկտիվների ձեռքբերումները և դրանք ուղղվեն դեպի հանրապետության արդի պահանջների բավարարումը: Զգացվում է ինստիտուցիաների աշխատանքի որոշ ակտիվացում, միջազգային գիտական համագործակցության ընդլայնում, ինչը կարևոր է հանրապետության ներկայիս ֆինանսական ծանր պայմաններում:

Դարձան տեղաշարժեր կան նաև ԳԱՍ կենտրոններում ապահովում ասպարեզում:

● Մեծ արդյունավետությանը շահագործվում է ՀՀ ԳԱՍ կոնկրետերային ցանցը, որը կապված է Ինտերնետի հետ: Զգալի աշխատանք է կատարված գիտական զբաղմունքային ձեռքբերում և տեղեկատվության աղբյուրների ընդլայնման ուղղությամբ:

● 1998 թ. վերջնական հաջողվեց լուծել ԳԱՍ համար չափազանց կարևոր, երկար տարիների ընթացքում չլուծված, հիմնախնդիրներից մեկը. Գաղտնի Գործընկերություն հիմնադրամի հայկական բաժանմունքի միջոցով ԳԱՍ ձեռք բերեց ժամանակակից բարձր մակարդակի կոնկրետերային տպարան, որը տեղադրվեց արմատապես վերակառուցված մասնաշենքում:

● Լուծվեց նախագահության և նրա շրջապատում գտնվող ավելի քան 10 գիտահետազոտական ինստիտուտների, գիտական կենտրոնների և գրադարանի ջեռուցման հարցը, որի համար հիմնադր վերակառուցման նպատակով ջեռուցման համակարգը և տեղադրվեցին նոր սարքեր:

● Վերակառուցվեց և սկսեց քոլորովի նոր հիսուններով գործել ԳԱՍ գիտակրթական կենտրոնը:

● Վերջին 10 տարվա ընթացքում առաջին անգամ ակադեմիային տրամադրվեցին բազանի ֆինանսավորման որոշ գումարներ, ինչը հույս է ներշնչում, որ հետագայում կհաջողվի լուծել գիտական աշխատանքների գյուղական ապահովման հրատապ հարցերը:

ԳԱՍ ինստիտուտների, բաժանմունքների և կառուցվածքային այլ ստորաբաժանումների 1998 թվականի գործունեության հիմնական արդյունքների մասին կզեկուցեն բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարները, գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքների մասին՝ ԳԱՍ ակադեմիկոս-քարտուղարը: Չե՛ն կարևորում, որ այդ հարցերի վրա կանգ կառնեն նաև մեր գիտնականները: Ուստի ես կըփորձեմ կանգ առնել մի քանի սկզբունքային հարցերի վրա:

Կարելի է հավատել, որ ԳԱՍ համակարգի ինստիտուտներին հաջողվել է դժվարագույն պայմաններում պահպանել գիտության կարևորագույն ուղղությունները և իրականացնել գիտական լուրջ հետազոտություններ:

Սակայն այս ամենը դեռևս ձեռք բերածի «մի կերպ» պահպանել է, և եթե հանրապետության իշխանությունները կարող միջոցներ չձեռնարկեն գիտության վերաբերյալ մտեցնումներ լրջորեն բարեփոխելու ուղղությամբ, մենք կկորցնենք մեր գիտական ներուժը, կկանգնենք փակուղու առաջ և չենք կարողանա ապահովել մեր երկրի առաջընթացն ազատ շուկայական հարաբերությունների դժվարագույն պայմաններում:

Թե՛ հիմնարար և թե՛ կիրառական հետազոտությունների առաքելները ՀՀ ԳԱՍ դեռևս չի կարողացել հասնել իր նպատակին՝ աշխատանքները տանել միջազգային մակարդակին համապատասխան, պահանջված չափով աստար կանգնել հանրապետության անվտանգությունն ապահովելու, հանքահումքային, վառելիքա-էներգետիկ և այլ շատ բարդ հիմնահարցերի լուծման գործին:

Գաղտնիք չէ, որ գիտահետազոտական հիմնարկները ներկա պայմաններում աշխատում են իրենց հնարավորություններից դեռևս ցածր մակարդակով: Այստեղ կան և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ պատճառներ:

Անկախ պետությունը գիտության նկատմամբ նոր պահանջներ է դնում: Գիտության զարգացումը դիտարկվում է որպես ՀՀ տնտեսական, քաղաքական և սոցիալական առաջընթացի, ազգային անվտանգության ապահովման, շուկայական ժառանգակից հարաբերությունների բա-

ղելավման հիմնարարներից մեկը: Այս իրավիճակում արդիական պահանջ է դառնում գիտական ներուժի պահպանումը, զարգացումն ու նրա արդյունավետ օգտագործումը:

Հայաստանի անկախության առաջին տարիներին ՀՀ ԳԱՍ-ի դժվարությունները պայմանավորված էին կազմակերպչական մեկուսացմամբ՝ նախկին միության կազմակերպման համալիրից՝ կենտրոնացված պատվերների ընդհատումով և միջակազմակերպական կապերի խզումով: Այդ պատճառով գիտության բյուջեն խիստ կրճատվել էր, իսկ բազային և ծրագրային ֆինանսավորումը գործնականում ընդհատվել: Ամենացավալիս այն է, որ այս ամենը տեղի էր ունենում ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակում, լրատվական մեկուսացման, ենթակառուցվածքի շեղումների, լարրատար բազայի, գյուղատնտեսական մատակարարման վթարային պայմաններում: Ի վերջո, ակադեմիայի գիտական ներուժի նվազման միտում, շնորհիվ գիտնականների արտահոսք, ստալինյան արտադրությունների գիտությանը քննազակտի մեջ ընդգրկելու դժվարություններ, գիտական դպրոցների «եծարցում»՝ պատեղից բխող բոլոր հետևանքներով:

Ուստի, ելնելով ստեղծված պայմաններից, հանրապետությունում ակադեմիայի գիտական ներուժը ռացիոնալ օգտագործելու համար անհրաժեշտ էր գնալ լրջորեն մտածված և ծրագրված փոփոխությունների, հատկապես գիտության ֆինանսավորման գործող համակարգի արմատական բարեփոխման խնդրում:

Առաջին հերթին անհրաժեշտ է բյուջետային քաղաքականության շրջանակներում հրաժարվել գիտության ֆինանսավորման մնացորդային քաղաքականությունից:

1992 թվականից ի վեր գիտական հիմնարար հետազոտությունների ֆինանսավորման հիմնական ձևը դարձել է թեմատիկ ֆինանսավորումը: Սակայն, փորձը ցույց է տվել, որ այն կարիք ունի լուրջ կատարելագործման: Ֆինանսավորման այդ ձևը չի կարող լինել բյուջեից հատկացման միակ եղանակը, որովհետև նրա միջոցով, ըստ էության, չեն լուծվում գիտական կառուցվածքային ծրագրերի ֆինանսավորման, ինստիտուտներում կատարվող գիտական աշխատանքների կենսապահովման հարցերը: Գիտահետազոտական ինստիտուտները գրվել են իրենց հիմնական կորդինացիոն և կազմակերպական ֆունկցիաները իրականացնելու, նոր ուղղություններով ծրագրեր և համապատասխան ներհարկումներ կտարելու հնարավորությունները, ինստիտուտներում կատարվող գիտական աշխատանքների կենսապահովման հարցերը: Գիտահետազոտական ինստիտուտները գրվել են իրենց հիմնական կորդինացիոն և կազմակերպական ֆունկցիաները իրականացնելու, նոր ուղղություններով ծրագրեր և համապատասխան ներհարկումներ կտարելու հնարավորությունները, ինստիտուտներում կատարվող գիտական աշխատանքների կենսապահովման հարցերը:

Անհրաժեշտ է սահմանել հիմնարար հետազոտությունների ֆինանսավորման նվազագույն չափը հանրապետության բյուջեից և այդ չափի սահմաններում՝ բազային հատկացումների տոկոսը: Եթե մենք չբարձրացնենք ինստիտուտների, նրանց բաժինների, գիտական խորհուրդների, ինչպես նաև բաժանմունքների և նրանց պարունակող գիտական խորհուրդների դերը գիտության ֆինանսավորման, կատարված աշխատանքների արդյունքների գնահատման և նոր խնդիրների առկայման ասպարեզում, մենք կկորցնենք գիտական դպրոցների կազմակերպման փորձնական ձևերը և ի վերջո՝ այն բոլոր, ինչ մեր ազգը ձեռք է բերել դարերի ընթացքում: Մի՞թե պարզ չէ, որ այժմ այն դարը չէ, երբ անհատ կամ մի խումբ գիտնականներ, առանց գիտական համապատասխան կոլեկտիվների համատեղ աշխատանքի, կարող են բարձրացնել գիտության զարգացման ծանր բեռը՝ անկախ հանրապետության և շուկայական հարաբերությունների պայմաններում:

Հիմնարար հետազոտությունների մի մասը անհրաժեշտաբար հիմնվում է փորձարարական բազայի վրա, որը առայժմ գոյություն ունի գիտական հաստատություններում և համալիր եզակի քննույթ ունի: Պարզ է, որ ներկա պայմաններում և նույնիսկ մտավա 5-10 տարիների ընթացքում հանրապետության համար դժվար կլինի խոշոր գումարներ հատկացնել հիմնարար հետազոտությունների փորձարարական բազան լրիվ վերակազմակերպելու, առավել ևս՝ այն միջազգային մակարդակի բարձրացնելու համար: Բայց ինչ-որ միջոցներ պարբերաբար անհրաժեշտ է հատկացնել մեր եզակի սարքերի պահպանման և օգտագործման համար:

Ինստիտուտների հաստատում բազային ֆինանսավորումը պետք է ապահովի ինչպես հիմնարար հետազոտությունները, տեսական մշակումները, այնպես էլ նպատակային անհրաժեշտ ծախսերը (լարրատար և փորձարարական բազաների, գրադարանների, հազվագյուտ սարքերի պահպանում և արդյունավետ օգտագործում, նոր բազաների ստեղծում, գիտական աշխատանքների հրատարակում, արտասահմանյան գիտական գործունեություն և այլն): Մեր կարծիքով բազային ֆինանսավորումը պետք է կառուցվի յուրաքանչյուր գիտական ոլորտի համար առանձին՝ ըստ նրա առանձնահատկությունների, հաշվի առնելով, որ արդեն իրենց գիտա-

կան բարձր որակը ապացուցած ուղղությունները հետագա զարգացում կարող են ստանալ միայն հիմնականում բազային ֆինանսավորման պայմաններում:

Ֆինանսավորման մի զգալի մասը կատարվող գիտության կողմից պետական պատվերի (գրանտների) ձևով պետք է հատկացվի գիտատեխնիկական կարևորագույն ծրագրերի իրականացմանը:

Այսպիսով, պետք է ապահովել բյուջեից բազմատեսակ ֆինանսավորման համակարգ, որը հնարավորություն կտա նպաստել գիտության պահպանմանը և զարգացմանը:

Ավելորդ չէ նշել, որ այս հարցերը բազմիցս բարձրացվել են մեր ինստիտուտների, բաժանմունքների, ԳԱՍ նախագահության կողմից, սակայն պատշաճ արձագանքի չեն արժանացել:

Գիտության կազմակերպման արմատական վերակառուցումը պետք է ընթանա մի կողմից գիտական հաստատությունների կառավարման և ենթակառուցվածքների կատարելագործման, մյուս կողմից՝ գիտական ուղղությունների ճշգրտման և դրան համապատասխան գիտական կարգերի նպատակային պարտադրման և տեղաբաշխման ուղղությամբ:

Գիտատեխնիկական արտադրանքի պահանջարկի նվազումը հանրապետությունում տանում է դեպի գիտության ծավալների կրճատում և գիտական մտքի արտահոսք: Մենք բազմիցս նշել ենք, որ անընդունելի ենք համարում այն կարծիքը, որ եթե մեր հանրապետությունը փոքր է՝ համապատասխանորեն պետք է կրճատվեն գիտության ծավալները:

Հանրապետությունում ստեղծվել է գիտական մեծ ներուժ՝ գիտական դպրոցներ, ուղղություններ, որոնք ունեն միջազգային ճանաչում, և պահանջում են նոր մտեցնումներ ԳԱՍ միջազգային գիտական կապերի նկատմամբ:

Հաշվետու շրջանում էական է եղել տարբեր երկրների, և առաջին հերթին Ռուսաստանի Դաշնության, գիտական օջախների հետ կցեղված պայմանագրերի շնորհիվ ստացված միջոցների և հնարավորությունների օգտագործումը, հովանավորների, հիմնարկումների ներդրումները:

Ակադեմիայի միջազգային կապերի ներկա փուլի հիմնական խնդիրը ակադեմիայի ներառումն է համաշխարհային գիտական հանրության համակարգի մեջ: Դա պետք է լինի այնպիսի ներառում, որի պայմաններում մեր ակադեմիան պահպանի իր ինքնուրույնությունը, իր գիտական ներուժի անբողջակամությունը, այդ ներուժը ՀՀ սոցիալ-տնտեսական, մշակութային շահերին ծառայեցնելու գերակայությունը: Համախ համագործակցությունը հանգում է սույլ մեր լավագույն գիտնականների գործունեանը՝ հրավիրող կողմի հաշվին, որի հետ մենք համաձայնվում ենք՝ գիտական պոտենցիալը պահպանելու նպատակով:

Այդ, մեր գիտնականները չեն կարողին համաշխարհային գիտական կենտրոններից և ըստնումն են համապատասխան միջազգային կոչումներ, ճանաչում: Սակայն շատ ավելի կարևոր են մեր սեփական գիտական բազայի զարգացումը և ենթորվող գումարների անմիջական օգտագործումը հանրապետությունում: Սակայն մենք, այսպիսով, փաստորեն, գրվում ենք այս խնդրում սեփական գիտական քաղաքականություն վարելու հնարավորությունից և կարող ենք շատ քան կորցնել: Այս մասին անհրաժեշտ է շատ լուրջ մտածել:

Կարելի է ճշել նաև Ուկրաինայի և Բելոռուսի գիտական կենտրոնների հետ համագործակցությունը: Անհրաժեշտություն է դառնում այդ կապերի հետագա ընդլայնումն ու խորացումը, քանի որ ՀՀ գիտությունն իր բազմաթիվ ուղղություններով ինտեգրացված էր նախկին Սովետական Միության գիտական կենտրոնների հետ: Կարևոր հանգամանք է նաև Հինաստանի, Հունգարիայի, ԱՄՆ-ի, Իսրայելի, Սևնովյան երկրների գիտական օջախների հետ ՀՀ ԳԱՍ գիտական հիմնարկների համագործակցությունը: Լուրջ քայլեր են արվում Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի, Ինտասի, ՆԱՏՕ-ի գիտական ծրագրերի շրջանակներում համագործակցության ուղղությամբ:

Միջազգային գիտական համագործակցության շրջանակներում շատ կարևոր է մեր հանրապետության մի շարք ինստիտուտների բազայի վերա միջազգային գիտական կենտրոնների կազմակերպումը: Այս հարցը օբյեկտիվ անհրաժեշտություն է: Փաստ է, որ շատ հետազոտություններ, որոնք արդիական են մեր հանրապետության համար, կատարվել են տարիների ընթացքում և հանգեցրել են որոշակի արդյունքների: Ինտասի-ինտասի են ոչ միայն գյուղ տեղական ինքնուրույն լուծում, այլև ունեն համաշխարհային ճանաչություն:

Միջազգային կապերի ընդլայնումը սկզբունքային հարց է հատկապես հիմնարար հետա-

զոտությունների քննազատում ձեռք բերված գիտական ներուժի պահպանման հարցում՝ միջազգային հիմնարկումներից, գրանտներից օգտվելու համակարգով, ինչպես նաև գիտական հաղորդակցման և համագործակցման համար:

Հարկավոր է ավելի արդյունավետ օգտագործել մեր հանրապետության համապատասխան արտադրական ներհարկությունների և արտասահմանյան մի շարք կազմակերպությունների կողմից տրամադրվող պայմանագրային միջոցները: Զօգազորված հնարավորությունները շատ են, դրանց խելամիտ գործադրումը կարող է որոշ չափով թեթևացնել մեր հանրապետության բյուջեի առանց այն էլ մեծ ծանրաբեռնվածությունը:

Ծատ կարևոր է պետության հանդեպ ակադեմիայի պարտականությունների գիտակցումը: Ըստ գործող որոշումների, ակադեմիան պետական իշխանությունների խորհրդատու է գիտության քննազատում: Նրա առաջարկությունները պետք է քննարկվեն իշխանությունների համապատասխան մարմինների կողմից, հիմք դառնան որոշակի եզրամանկումների և միջոցառումների համար: Ակադեմիան, այս կամ այն չափով, կատարում է իր այդ կարևորագույն պարտականությունը: Սակայն, դժբախտաբար, դեռևս համարյա արձագանք չի գտնում իշխանությունների կողմից:

Զնայած առածին, մենք պարտավոր ենք շարունակել մեր պարտականությունների իրականացումն այս ուղղությամբ: Մենք դեռևս շատ համախ միջև վերջ չենք հասցնում հանրապետության կառավարության պաշտոնական խորհրդակցման մեր պարտականությունների կատարմանը: Ամենից առաջ դա վերաբերում է գիտության, հանրապետության տնտեսության զարգացման առաջնային ուղղությունների ձևավորման վերաբերյալ առաջարկություններ մշակելուն: Դեռևս է հասնել այն քանին, որ իշխանությունները հաշվի նստեն գիտության հետ: Դա կարող է հրամայական պահանջ է:

Չի կարելի նորմա համարել, որ մինչև այսօր չի ընդունվել «Գիտության մասին օրենքը»: Սա կարևորագույն խնդիր է, որը պետք է ապահովի գիտական և գիտատեխնիկական քննազատում և ինտեգրացիոն համար կայուն սոցիալական երաշխիքներ, գիտական կազմակերպությունների համար ստեղծի զարգացման բարենպաստ պայմաններ և վերջնական հստակեցնի ոչ միայն ակադեմիայի, այլև ընդհանրապես գիտության տեղն ու դերը մեր կյանքում:

Այնպես է, որ գիտություն-արտադրություն կապը միշտ էլ, որ ամենիջական է և ուղղակի, առավել ևս՝ անցումային շրջանակներում: Սակայն ոչ մի երկիր չի կարող ունենալ լուրջ գիտական ներուժ՝ առանց զարգացած տնտեսության: Որքան էլ մենք այլընտրանքային աղբյուրներ հայտնաբերենք, միևնույն է, գիտության հիմնական ֆինանսավորումը կատարվելու է պետական բյուջեից: Իսկ բյուջեի հիմքը՝ զարգացած արտադրությունն է: Միևնույն ժամանակ մրցունակ արտադրությունների ձևավորումը առանց լուրջ գիտության դժվար է պատկերացնել:

Դեռևս չկան մեր ժողովրդի կենսական պահանջները բավարարող մրցունակ արտադրական համակարգի ստեղծման մշակված գիտակազմակերպական և տնտեսական հիմքեր: Այս խնդիր լուծման կարևոր նախապայմաններից է հանրապետության գիտական և արտադրական ներուժի համախ օգտագործումը:

Համախ մենք զարմանում ենք, թե ինչո՞ւ մեր գիտնականները առաջարկություններ, ձեռքբերումներ օգտագործվում են արտասահմանյան երկրներում, իսկ մեզ մոտ, ունենալով համապատասխան արտադրություններ, դրանք չեն ներդրում:

Բարոյաբանային կառույցի, պղնձի, պլյումբի, քիմիական պարարտանյութերի արտադրության, հանքահումքային պաշարների ռացիոնալ օգտագործման, թափանցիկ վերամշակման, նոր նյութերի ստեղծման, գյուղատնտեսական մթերքներով հանրապետության ապահովման հարցեր և բազմաթիվ նման հարցեր հիմնարարաբար պահանջում են ակադեմիայի գիտական միջամտումը՝ իշխանությունների կողմից առավելագույն գիշտ որոշումներ ընդունելու համար:

Արմատական վերակառուցման անհրաժեշտություն կա մեր գիտական հիմնարկների աշխատանքներում՝ երիտասարդ գիտնականների և մասնագետների ընդգրկման ասպարեզում:

Գիտությունը պահանջում է համապատասխան մթնոլորտի ապակայություն և երիտասարդ կարգերով համարյա հնարավորություններ: Գիտնականների միջև հասալք բավակային բարձր է, իսկ 30-ից ցածր տարիք ունեցող գիտնականների մուտքը դեպի գիտություն, համարյա բացառված է: Մենք մշակել և իրականացնում ենք որոշ միջոցառումներ այդ ուղղությամբ, քայլ դա դեռևս շատ քիչ է և մեզ չի բավարարում:

Այսպես, ՀՀ կառավարության որոշումով ըստեղծվել է մի նոր կառույց՝ ՀՀ ԳԱՍ կից գիտակրթական միջազգային կենտրոն, որտեղ իր որակավորումը կբարձրացնի գիտության ուղին բուն երիտասարդությունը՝ ինչպես մեր երկրից, այնպես էլ այլ երկրներից: Միջազգային կենտրոնը կպատրաստի բարձրորակ կադրեր ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի միջոցով, կկազմակերպի դասընթացներ հայերենին, օտար լեզուներին լիարժեք տիրապետելու, կոմպյուտերային ուսուցման համար, իրականացնելով գիտական որակավորման բարձրագույն անընդհատություն ակադեմիայի և կենտրոնի որոշ չափով կօգնի կադրերի պատրաստմանը և վերապատրաստմանը, օգտագործելով ակադեմիայի, բունների գիտական ներուժը և արտասահմանյան մասնագետների փորձը:

Անհրաժեշտ ենք համարում սահմանել երիտասարդ գիտնականների համար մրցանակներ, բարձրացնել ասպիրանտների թղթակցությունը, հրատարակել նրանց աշխատանքները, միջոցներ ձեռնարկել, որպեսզի երիտասարդներն ավելի ակտիվորեն մասնակցեն գիտության հետ աղբյուրի կարևորագույն նշանակություն ունեցող աշխատանքներին: Այդ կարևորագույն խնդիր լուծման համար շատ անընդհանր ունեն ինչպես ԳԱՍ նախագահությունն ու բաժանմունքները, այնպես էլ ինստիտուտները:

Հարգելի քարեկաններ, Դատական ատումով վայրկյաններ են մնացել, որպեսզի մենք թևակոխենք նորորդ հազարամյակը. մարդկությունը դեպի նոր դարաշրջան է գնում գիտության և տեխնոլոգիաների քննազատում ձեռք բերած խոշորագույն նվաճումներով և, իհարկե, նաև նոր հույաներով:

Հայաստանը խորհրդային հասարակարգից թեմակոխել է շուկայական հարաբերությունների և ժողովրդավարական գործընթացների զարգացման մի նոր շրջան, թե՛ տնտեսական ու սոցիալական, թե՛ պետական ու իրավական, թե՛ գաղափարախոսական ու աշխարհայեցողական և թե՛ այլ ոլորտներում ծագել են նորմալ հիմնախնդիրներ, որոնք գիտականորեն գրեթե հետազոտված չեն: Արմատ